# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

## ՀՀ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻՆ

ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը հուլիսի 19-ին ընդունեց Կաթողիկոսական Տեղապահ Ներսես արքեպս. Պոզապալյանին: Հանրապետության Նախագահին ներկայացնելով օրերս կայացած Գերագույն Հոգևոր Խորհրդի նստաշրջանի արդյունքները՝ Տեղապահը նշեց, որ քննարկվել են Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջիկա ընտրությունների նախապատրաստական աշխատանքները և այդ ուղղությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետագա գործունեությանն առնչվող հարցեր: Զրուցակիցները շոշափեցին նաև եկեղեցի-պետություն փոխհարաբերություններին վերաբերող խնդիրներ: Ռոբերտ Քոչարյանը բարձր գնահատեց եկեղեցու դերը հայապահպանության և համայն հայության համախմբման գործում:

*ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՄԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ*